ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 4

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 01.02.2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ-2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի

14 -րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արևշատ համայնքի ավագանու 01.02.2017 թվականի թիվ-2 նիստի օրակարգը.

1.Արևշատ համայնքի 2017 թվականի ,, Տեղական տուրերի և վճարների դրույքաչափեր սահմանելու և Արևշատ համայնքի ավագանու 13.դեկտեմբերի 2016թվականի թիվ- 38 -ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին.

2. Արևշատ համայնքի 2017 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին.

3. Արևշատ համայնքում համայնքային սեփականություն համարվող հողերը աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու , մեկնարկային գինը և լոտի չափը սահմանելու մասին.

4. Արևշատ համայնքի սեփականություն համարվող Բաղրամյան 45/1 հասցեում գտնվող անշարժ գույքը / կիսակառույց պահակատունը / աճուրդ վաճառքով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԹԱՆԵՍՅԱՆ ԱՐԱ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ

3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

4. ՄԻԼԻՏՈՆՅԱՆ ԳԱԳԻԿ

5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 5Ն

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.12.2016 ԹՎԱԿԱՆ Ի ԹԻՎ-38-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ /հոդվածի 18-րդ կետի պահանջներով և ,, Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Արևշատ համայնքի 2017 թվականի ,, Տեղական տուրքերի և վճարների,, դրույքաչափերը համաձայն հավելվածի.

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Արևշատ համայնքի ավագանու 13.12.2016 թվականի թիվ 38 -Ն որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱԹԱՆԵՍՅԱՆ ԱՐԱ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
4. ՄԻԼԻՏՈՆՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ

Հավելված

Արնշատ համայնքի ավագանու

2017 թվականի փետրվարի 1-ի N 5Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000 ՀՀ դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

- 200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 ՀՀ դրամ.

- 500-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 ՀՀ դրամ.

- 1000-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 ՀՀ դրամ.

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100.000 ՀՀ դրամ.

գ. ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3.000 ՀՀ դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5.000 ՀՀ դրամ:

2. *Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման,*

աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 ՀՀ դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն , ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 դրամ:

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60.000 դրամ.

9. *Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկահոլային խմիչքների և / կամ / ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝*

Ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10001 ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 ՀՀ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13001 ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20001 ՀՀ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000 ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46000 ՀՀ դրամ:

Բ .ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10001 ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10001 ՀՀ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13001 ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20001 ՀՀ դրամ,

- 200ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000 ՀՀ դրամ,

-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46000 ՀՀ դրամ:

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 5000 դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 25000 դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000 դրամ.

դ. խաղատների համար՝ 500.000 դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ 250.000 դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ 100.000 դրամ.

12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11.000 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16.000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 21.000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 31.000 դրամ.

բ. **ոչ հիմնական** ինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9.000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի

օբյեկտի համար՝ 16.000 դրամ.

14) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

15) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100.000 դրամ.

16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10.000 դրամ.

2. Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերը համայնքի ավագանու որոշմամբ հաշվարկվել 0.5 գործակցի կիրառմամբ:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել 0.5, գործակցի կիրառմամբ:

14. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 1.000 դրամ

2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների / այդ թվում՝ դրանց վերակառուցումը. վերանորոգումը. ուժեղացումը. արդիականացումը. Ընդլայնում ու բարեկարգումը/

կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 5000 հազար դրամ.

3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 3000 հազար դրամ:

4.Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վար և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի / փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմվում է 3000 հազար դրամ:

5. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 2000 հազար դրամ

6. Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանվում է 0 դրամ:

13/. համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայություններից օգտվողների համարէ համայնքի կողմից կամ համայնքի կողմից պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարը 6000դրամ.

14/. համայնքային ենթակայության երաժշտական դպրոցի ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից կամ համայնքի կողմից պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարը համայնքի երեխաների համար 7000 դրամ :

18 / համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար մեկ փաստաթղթի փոխհատուցման վճար 500 դրամ.

Աշխատակազմի քարտուղար Է. փորթուգալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 6 Ն

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Ելնելով անհրաժեշտությունից կատարել հետևյալ փոփոխությունները.

Վարչական բյուջեի եկամուտները ավելացնել տուրքերի մասով 64.0 հազար դրամ :

08.02.04.51 գործառնական դասակարգման 4111 հոդվածի վրա ավելացնել 24.0 հազար դրամ. . 09.05. 01.51 գործառնական դասակարգման 4111 հոդվածի վրա ավելացնել 40.0 հազար դրամ դրոշմանիշային վճարի նպատակով.

Ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդից 11.01.02.52 գործառնական դասակարգման 4891 հոդվածից 995.0 հազար դրամ պակասեցնել և նախատեսել 04.05.01.59 ծրագրի /փոխոցների պահպանում և շահագործում / 900412154362 հաշվի 5122 հոդվածի վրա 400.0 հազար դրամ կանգառներում սպասասրահներ տեղադրելու նպատակով:

08.06.01.55 ծրագրի / հանգիստ. մշակույթ և կրոն / այլ դասերի չպատկանող 900412154222 հաշվի 5422 հեղվածի վրա 390.0 հազար դրամ մշակույթի տան տարածքում նստարաններ տեղադրելու նպատակով և 5112 հոդվածի վրա 205.0 հազար դրամ բակային զուգարան տեղադրելու նպատակով:

Կողմ -6 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱԹԱՆԵՍՅԱՆ ԱՐԱ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ

4. ՄԻԼԻՏՈՆՅԱՆ ԳԱԳԻԿ

5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 7

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ԼՈՏԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշեց.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին աճուրդային կարգով օտարելու համայնքային սեփականություն համարվող հետևյալ հողամասերը՝

Ա / - Համայնքի Բաղրամյան 62/1 հասցեում գտնվող 03-021-0039-0028 ծածկագրի տակ գտնվող 0.0351հա մակերեսով հողամասը

. Նպատակային նշանակությունը բնակավայրերի.

. Գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման.

Բ / - Համայնքի Թումանյան 54 հասցեում գտնվող 03-021-0017-0015 ծածկագրի տակ գտնվող

0.09855հա մակերեսով հողամասը.

նպատակային նշանակությունը բնակավայրերի

Գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման

2. Օտարվող հողամասերի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100 % չափով:

Քայլի չափը սահմանել 5000 հազար դրամ:

իսկ վաճառվող հողամասերի լոտի չափը սահմանել՝ 0.0351 հա և 0.09855հա:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԹԱՆԵՍՅԱՆ ԱՐԱ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
4. ՄԻԼԻՏՈՆՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 8

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲԱՂՐԱՄՅԱՆ 45/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ / ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՊԱՀԱԿԱՏՈՒՆԸ/ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱԵՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և հիմք ընդունելով ,, ԱՐՏԿԱՊԻՏԱԼ,, Անշարժ գույքի գործակալության16.01.2017թ տրված Անշարժ գույքի շուկայական գնահատման հաշվետվությունը և եզրակացությունը.

Համայնքի ավագանին որոշում է՝

1.

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն համարվող բաղրամյան 45/1 հասցեում գտնվող անշարժ գույքը / կիսակառույց պահակատունը/ ծածկագիր 03-021-0039-0027 մակերեսը 31.11քմ հողամասի չափը 0.0085հա աճուրդ վաճառքի կարգով օտարելու.

2. Օտարվող համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքի / կիսակառույց պահակատան/ մեկնարկային գինը սահմանել 266000 / երկու հարյուր վաթսունվեց հազար / ՀՀ դրամ. իսկ քայլի չափը սահմանել 5000 հազար դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԹԱՆԵՍՅԱՆ ԱՐԱ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
4. ՄԻԼԻՏՈՆՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ